

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D.

202 West 23d St., New York, N. Y.

Vol. V, 1895



ՌՈՒՍԱՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԱՅ ԽՄԲԱԿ

RUSS-ARMENIAN SOLDIERS

Հասցե

Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.

կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն ֆրանք
կանխիկ

ԲՈՎՆԵՐԵԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Ռուսահայ զինուորաց խմբակի—

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ—

Բարեկարգութեամբ Ծրագիրք Հայաստանի հա-
մար.— Թէ արդեօք Ռուսիա պիտի օգնէ՞ Հա-
յոց.— Հայկական վարդապետութիւն.— Նա-
մակ Բաղէշէն. Սասուն (ոտամաւոր).— Նամակ
Վաղարշապատէն.— Նամակ Կ. Պոլսէ.— կեղ-
րոնացման պէտքն Հայաստանի մէջ գործող-
ներէն զգացուած.— Պէտք է շարունակել մաս
միջիններն.— Այսօրեայ Արուեստգիտական
Հիմնարկութիւն. վերի մասակիմ սովոր.— Ի
զէն, ի վրէժ (ոտամաւոր).— Նամակ Լիննէն.—
Մեծ հանրային ժողով Հայոց խնդրոյն համար ի
Լոնտոն.— Նոր հրատարակութիւն.— Այլ և Այլք

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Ի դէպ է նկատել թէ այս տարի երբ
Հայաստանի փրկութեան կամ կորստեան
նախապայմանքն վճռուելու վերայ են, Հայ
Աշխարհի խորհող մտքերն մեծ ճիգ մի
չեն աներ մտաց և տրամադրութեանց
ազդելու։ Թուրքիոյ և Ռուսիոյ Հայ բա-
նիբուն գրողներն ազատ չեն ազգային ճգ-
նաժամին վերայ հրատարակութիւններ ա-
նելու իրենց թերթերուն մէջ, բայց կըր-
նան արտասահման հրատարակուող Հայ
օրկաններու մէջ կեղծ անուամբ գրել,
կամ առաձին տետրներ, գրքեր հրատա-
րակել Հայերէն, ֆռանսերէն, գերմանե-
րէն և այլ լեզուներով։ Մշակի, Արձա-
գանքի, Արեւելեան Մամուլոյ, Հայրենիքի,
Արեւելքի խմբագիրներն և այլք այսպիսի
հնարքներու չգիմեցին Եւրոպիոյ կարծեաց
վերայ հզօր ազդեցութիւն գործելու հա-

մար այս պատմական պահուս։

Նկատելով Հայ դրողաց այս անգովե-
լի թուլութիւնն, պարտիմք հռչակել թէ
ՖԻՆԻՏԻՐԻՔ ԿՐԻՆ ARMENIAN CRISIS
արագահաս հրատարակութեամբն ազգա-
յին երախտագիտութեան արժանի հան-
դիսացաւ։ Այդ Հայաստանի Ամերիկացի Մի-
ացեալ Նահանգներէն յատկապէս գնաց
յԱնգլիա և իւր բոլոր ժամանակ կը նուր-
րէ Հայկական խնդրոյն։

* *

Բազարատ Ասլան կեղծանուն տակ
ոմն կայ այժմ Լոնտոնի մէջ իբրեւ Հայ
Հայրենասէր գործիչ, որ լոնտոնեան թեր-
թերուն նայելով, Ամերիկայի մէջ դաստի-
արակուած է և կը յաւակնի իբրեւ Ամերի-
կայի Հայոց ներկայացուցիչն խօսիլ։ Անկ-
լո-Արմինեան Ընկերակցութեան մէջ նստին
մէջ, որպէս կ'իմանամք Տէյլի Նիւզէն,
անպատեհ խօսքեր խօսեր է անգլիացի
քաղաքական մարդոց նկատմամբ։ Այսպի-
սի ինքնակոչ գործիչներ արժանաւոր պա-
տիժն են մեր գաղթականաց, որք կարե-
ւորութիւն չառնին կեդրոն մ'ունենալու
առաջարկին։

* *

Թուրքիոյ եւմտացոյցին մէջ այս տարի
խոշոր բաց մի կայ։ Կառավարութիւնն
դարձեալ ամեն քար պիտի չըջէ գանձ
Հայթայթեւու համար, և արդէն հրաման
յղած է գաւառներն որ կեդրոնին դրամ
հասցունեն փութով։ Ի հարկէ նոր զեղ-
չեր պիտի լինին հանրային պաշտօնէից
թողակաց, որով կաշառակերութիւնն նո-
րոգ օրինականութիւն մի պիտի զգենու-
նաւ տուրքերն պիտի ծանրանան ինդճ
ժողովրդին ուսոց վերայ որ արդէն ու-
ժաւապառ լինելով դժնդակ լուծն ցնցելու
նոր ներշնչում մի պիտի զգայ։

* *

Անկողմնակալութեան սիրով կը հրա-
տարակեմք Սր. Ազարեանի, Կաթսլիկ Հա-
յոց Պատրիարքի ի նպաստ գրուած նամա-
կըն, առանց տեղի ունենալու մեր կողմա-
նէ կարեւոր դիտողութիւններ աւելցու-
նելու, մանաւանդ սր ամեն ընթերցողկա-
րող է տեսնել թէ ողբան ոյժ ունին ջա-
տագովականին փաստերն։

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ՍՊԱՌԱՑՈՂ ՎՏԱՆԳՆ

Սասնոյ կոտորածէն ի վեր ինն ամիս անցած է: Եւրոպական տէրութիւնք չափազանց յամր և թոյլ վարուեցան անցքերուն հաւատալու ինչպէս և անցքերն քննելու մէջ, և այժմ ալ բարեկարգութեան կիսկատար միջոցներ կ'առաջարկեն, ինչպէս պիտի շարժին երբ ըստ գործադրութեան վարկեանն հասնի:

Մայիս 14ին առ «Թայմզ» ուղղեալ Պոլսեան հեռագիր մի կը ծանուցանէ թէ տէրութեանց դեսպանք Բ. Դրան ներկայեր են բարեկարգութեանց ծրագիր մի Հայաստանի համար: Աւասիկ այդ ծրագրի գլխաւոր արամադրութիւններն—

1. Բրիտանոնայք ևս հանրային պաշտօններու պիտի կարգուին, և տէրութիւնք իրաւունք պիտի ունենան մերժելու (veto) այն անուանումներն զորս իրենք անգոհացուցիչ համարին:

2. Բարձր յանձնակատար մի, որ Եւրոպացի պիտի չլինի, վերապահութիւն պիտի անէ բարեկարգութեանց գործադրման վերայ, և ի պաշտօնի պիտի մնայ մինչև որ բարեկարգութիւնք ի գործ դրուին:

3. Բարձր յանձնակատարին ընտրութիւնն տէրութեանց հաւանութեան պիտի ենթարկուի, և միւսիւրմաններէ ու քրիստոնեաներէ կազմեալ յանձնաժողով մի վիճակներուն գործոց մատակարարութեան վերայ տեսչութիւն պիտի կատարէ:

4. Սասնոյ բնակիչք իրենց կորուստներու փոխարէն տուգանք պիտի ընդունին և Բրդերն զինաթափ պիտի լինին:

Կը մնայ գիտնալ թէ, ըստ մանրամասնութեանց ծրագրին, ինչ կերպով և զօրութեամբ Բրդերն զինաթափ պիտի լինին, թէ զերի տարուած 1,000 Սասունցի կիներն ու տղայքն ինչպէս ետ պիտի առնուին, թէ ինչ պատճառաւ արդեօք

վերապահութիւն Եւրոպացի պիտի չլինի, հեռագրեալ ծրագրէն այնպէս կ'երեւի թէ Հայաստանի մէջ թուրք պաշտօնեայք պիտի գտնուին դեռ, և թրքերէ ու քրիստոնեաներէ խառն յանձնաժողով մի կարեւոր դեր պիտի կատարէ իբրեւ վարչութիւն: Գլխաւոր թոյլ կէտն այն է որ բարձր յանձնակատարն Եւրոպացի չպիտի լինի, որ կը նշանակէ թէ Սուլթանին հրապարակներէն պիտի ընտրուի: Ինչ ձախող խորհուրդ: Ինչու Եւրոպիոյ կողմէն վերին հսկողութիւն անելու փափուկ և դժուարին յանձնարարութիւնն Եւրոպացւոյ մի վստահելու փոխանակ Սուլթանին հրապարակ և հետեւապէս Պալատին դժոխաւունջ ազդեցութեանց ենթակայ թրքահպատակի մի տան եթէ անկեղծ և լուրջ կերպով Հայաստանի բարեկարգութեան կը բաղձան:

Կը պնդեմք այն էական պայմանի վերայ զոր նախորդ թուով կը պարզէինք, թէ այս տարի Հայաստանէն «Թուրք կառավարութիւնն ազխով մաղխով դուրս պէտք է ելնէ: ... Ոչ թուրք փաշա և ոչ թուրք օրէնք կրնայ ընդունիլ Հայաստանի սահմաններէն ներս:» Եթէ տէրութիւնք կը ճանաչեն կարող թուրք փաշա կամ թըրքահպատակ պաշտօնեաներ, ինչ որ յանջափս տարակուսելի է, թող այդ հազուագիւտներն Հայաստանէ դուրս պաշտօնի կոչուին, զի ամեն ուրիշ գաւառի մէջ անհուն պէտք կայ անոնց:

Մասնաւոր գոհութեամբ տեսանք թէ վերջապէս անգլիացի գրող մի, Բոնթէմփորէրի Րիվիուի Մայիս թուոյն մէջ ուղիղ և ողջամիտ հայեցողութիւն կը պարզէ այս մասին: Ահաւասիկ թէ ինչ կ'ասէ յօդուածագիրն—

«Հայաստանի այս ներկայ հրատապ խնդրոյն մէջ ցայսվայր Անգլիա և Ռուսիա գործեցին համաձայնօրէն: Մինչև ցարդ կը խորհրդածէին: Այլ գործելու ժամանակն ահա մօտալուս է: Ինչ պիտի անեն: Միայն մէկ գործնական կամ կարելի բան կայ անելու: Անգլիա, Անգլիա-թրքական Դաշնագրութեան ուժով, պարտաւոր է նախաձեռն լինիլ առաջարկելու որ թրքաց գործադրական իշխանութիւնն մարի այն գաւառաց մէջ ուր այնպիսի ահաբեկ զեղծումներ գործած է: Այսինքն, Անգլիա, 17 տարի տուած լինելով թրքին որ զՀայաստան բարեկարգէ, պարտի պն-

գեւել այն պայմանին վերայ որ անհրաժեշտ հիմն է ամենայն բարեկարգութեան ի թուրքիա, ասեւ կ'ուզեմ արտաքսումն թուրք գործադիր իշխանութեան, թուրք զօրաց և թուրք պաշտօնէից քովամղակ վոհմակին: Սուլթանն հարկաւ կրնայ և պարտի պահպանել իւր ամուսնական վեհապետութիւնն, բայց փաշաներու գործադրական իշխանութիւնն յաւիտեանս պէտք է դադար առնու այն գաւառին մէջ զոր իրենց ուժերներով աւերեցին: Անգլիա պարտի առաջարկել գայս: Սակայն Ռուսիա միայն կարող է գործադրել զայն: Ի ներկայիս Ռուսիա բնականապէս քիչ տրամադրութիւն կը ցուցնէ ի սէր Հայոց կամ ի սէր եւրոպական համաձայնութեան կրակէն հանել շաքանակն: Բայց եթէ Անգլիոյ նախաձեռնութեամբ Ռուսիա ստանայ եւրոպական յանձնարարութիւն մի, որուն զօրավիգ կանգնին անգլիական զրահաւորք ի Պէսիքա ծոցին, որով արածնութիւն տրուի Ռուսիոյ գրաւել և վարել Թրքական Հայաստանն ինչպէս Աւստրիա գրաւած կը վարէ զՊոսնիա և զՀէրցեգովինա, նորա պաշտօնութիւնն կը փարատի: Այսպիսի ինչ բաւական կարելի կը լինէր եթէ Անգլիա և Ռուսիա ընկերութեամբ կանոնաւորապէս գործէին: Եթէ ոչ խեղճ Հայք կրնան ի զուր կանչել իրենց փրկութեան օրն:

ԽԷ ԱՐԴԵՅՔ ԲՈՒՍԻԱ ՊԻՏԻ

ՕԳՆԷՔ ՀԱՅՈՑ

Կ. Պոլսէն առ Թայմզ ուղղեալ Մայիս 1 թուակիր հեռագիր մի կը ծանուցանէ թէ Թրքաց դեսպանն ի Բեդէրպուրկ տեսակցութիւն մ'ունեցած է Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարար՝ Իշխան Լօպանօֆի հետ Հայկական Խնդրոյն վերաբերութեամբ: Իշխանն յայտարարեւ է թէ նախորդ Սուլթաններն բարեկարգութեան խոստումներ արած էին որք թէպէտ Պէտլինի դաշնագրով կրկնուած են, սակայն գործադրուած չեն: այժմ Ռուսիոյ Անգլիոյ և Ֆրանսայի դեսպանք միասնական ծանուցագիր մի ի պատրաստել են, և ինչ որ ռուս կառավարութիւնն կը խնդրէ, Ջարին բաղձանաց համաձայն է, ռուսի կը յուսայ թէ Սուլթանն յօժարութեամբ պիտի ընդունի:

Ապրիլ 27 թուակիր հեռագիր մ'աւելը ծանուցանէ թէ Բեդէրպուրկի օմմ. դես-

պանին հրահանգ տրուած է ինդրել ռուս կառավարութեանն որ Կովկասի Հայոց յուզմունքն դադարեցունէ և թող չտայ որ զրամ հանգանակեն: Իշխան Լօպանօֆ յայտարարեւ է թէ կառավարութիւնն իրազեկ է թէ ինչ կը պատահի Կովկասի Հայոց մէջ: Այս տեսակցութեան նպատակն էր իմանալ թէ արդեօք ռուսիա համակիր է Հայոց: Կ. Պոլսոյ ռուս չըմանական մէջ կ'ասեն թէ Ռուսիա չպիտի թողու որ Կովկասէն զէնք և հայ յեղափոխական խմբեր անցնին ի Թուրքիա:

Այս հեռագիրներէն կը տեսնուի թէ Սուլթանն բաւական աշխատեւ է Ռուսիոյ համարիտ տրամադրութիւնն Հայաստանի վերաբերութեամբ իմանալ: Կը յուսամք թէ իւր մուկառնդ յոյսերն շատ տեղարացած են շնորհիւ այն որոշ յայտարարութեանց զորս իշխան Լօպանօֆ խնայած չէ դեսպանին: Անբանաւոր կը լինի ենթադրել թէ Ռուսիա Հայոց անհամակիր է: այդպիսի անհամակրութիւն հակառակ կը լինէր ոչ միայն մարդասիրութեան այլ և ողջամիտ քաղաքականութեան: Հեռաւոր ազգեր կը ցաւին Հայաստանի եղած անիրաւութեանց համար, միթէ դրացի մեծ ազգ մի չի՞ցաւիր: Եւ միթէ Ռուսիա յիմար է որ իւր միլիոն մի հայ հրապատակաց զգացումներն չարաչար վիրաւորէ՝ չօգնելով նոցա արեւակից հարստահարելոց: Այսօր Ամերիկոյ, Անգլիոյ, Ֆրանսայի և բոլոր քրիստոնեայ աշխարհի մէջ ժողովրդային համակրանքն Հայոց կողմն է, միթէ Ռուսիա կրնայ իւր վերայ բոլոր քաղաքակիրթ աշխարհի պարսաւն հրաւիրել անկարեկիր գտնուելով իւր դրացի քրիստոնէից: Արդէն Անգլիոյ մէջ մեծ գոհութիւն զգացին երբ իշխան Լօպանօֆ Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարար անուանուեցաւ, վասն զի նորա բարձր քաղաքական սկզբունքն ծանօթ էին եւրոպիոյ, և կը տեսնուի ու աւելի ևս յուսամք պիտի տեսնուի թէ Հայք և իրենց բարեկամք խաբուած չեն Լօպանօֆէն արգարաւէր քաղաքականութիւն ըստ պատելով:

Իրաւ է թէ ռուս թերթերէն ոմանք Հայոց փաստին հակառակ խօսեցան: այդպիսի յօդուածոց ամենէն յիմարականն է գուցէ այն որում կ'ակնարկէ մեր թըղթակիցն էջմիածնէն: Յիմարական բաժնողանք և միայն կոյր ատելութենէ բխող զրարանութիւն է ասել թէ Թուրքիոյ մէջ Հայաստան չկայ այլ Քրիստոստան: Պէտք է զգուշանալ այդօրինակ խաւարակուած արագութիւններ ռուսական կառավարութեան մտաց իրական թարգմանութիւն համարելէ:

Հ Ա Յ Ք Ա Ն

Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Պատմութեան մէջ կը կարդամք թէ Լեւոն վերջին արքայ Հայոց յետ իւր ազատութեան յաճախ դիմումներ կ'անէր առ իշխանս Եւրոպիոյ վերահաստատել զՀայ տէրութիւն ի Կիլիկիա: Նա անտարակոյս մերթ կոչում կ'անէր նոցա քրիստոնէական զգացմանց ըստ որում անարգանք էր քրիստոնէայ ազգի հպատակ լինել մահմետականաց, և մերթ նոցա աւանդական հաւատոյն ըստ որում իրաւունքն արքայազանց անկապտելի էր: Քրիստոնէայ և միապետական Եւրոպա խորապէս համակրեցաւ դժբախդ թագազուրկ թագաւորին և վստահացուց զնա թէ յարմար առթիւ իւր բաղձանքն պիտի կատարուին: Լեւոն անձկութեամբ սպասեց ցվերջին բոսէ և մեռաւ այն յուսով թէ Եւրոպա պիտի ազատէ զՀայաստան:

Յօրէ անտի հայ ազգն դադրած չէ անել նմանօրինակ դիմումներ, մանաւանդ առ Զարս և Զարուհիս և հազիւ երբեք վրիպած է չահիլ զնոցա համակրանս և մինչ իսկ խոտմուռն: Այս համակրանք և այս խոտմուռնք, զորոց անկեղծութիւն անհնար էր կասկածիլ, միշտ վառ պահեցին զՀայոց յոյսն, միթէր եղան նոցա ներկայ թշուառութեան, և մասամբ ծառայեցին թափ տալ Հայ յառաջդիմութեան: Մինչ այս մինչ այն՝ ամբ ամաց և դար դարոց կը յաջորդէին, թիւն և հարստութիւն Հայոց կը նուազէր, զօրութիւն կը նուազէր, զանազան տառապանք կը ծանրանային, սակայն յուսացեալ օգնութիւն ոչ հասանէր և ազատութեան օրն ոչ նշմարուէր եւրոպեան միջնորդութեամբ:

Կարելի էր այլ ևս համբերել և անփոյթ սպասել: Հայ ցեղն բոլորովին ստորնացած և անմտացած էր եթէ իրաց այս ահուլի կացութիւն չարաազդէր մի մտային և բարոյական յեղափոխութիւն:

Մեր ագիտութիւնն և անմշակութիւնն է բուն պատճառն մեր յուսախաբութեան: Եթէ գիտնայինք թէ ինչ են պայմանք փրկութեան և զայնս ըստ կարի

կատարէինք, յայնժամ պատճառ կը գոյանար յուսալոյ և մեր յոյսն այսօր իրացեալ կը լինէր: Սակայն, փոխանակ այսր, մեք յԱստուած և յԵւրոպ եւեթ ապաստանած եմք դատարկ ձեռամբ, և մեր խաւար տեսողութեամբ երեւակայած եմք զազատութիւն: Անորոշ և դիւանագիտական հաւաստիք զորս երբեմն մեզ չռայած են համակրող օտարք և թիւր մեկնութիւն քաղաքական աշխարհի ներշնչած են ի մեզ յոյսեր որոց կը պակասէր հաստատուն հիմն և զորս անսեղի էր տածել: Ներկայ կացութեան դժբաղդագոյն իրն այս է թէ այժմ իսկ, երբ այդ յուսոց անիրացումն յայտնի ինչ է, հասարակ ժողովրդեան ցաւալի միտումն է յամառիլ նախնական սխալին մէջ:

Հայոց այն մեծ մասն որ դեռ կ'ապրի միջնադարեան կրօնաւոր միջնորդութեամբ, հեռի յազատական ազդեցութեանց, կը տածէ ցնորական յոյսեր նկատմամբ միջամտութեան ողորմած Աստուծոյ և քրիստոնէայ աշխարհի: Ազգն վարժուած է ակնկալել մի հրաշաւոր ազատութիւն որ պիտի շնորհուի նմա այնպիսի նկատառութեամբք որոց ճշմարիտ բնութեան այն չէ բնաւ տեղեակ: Այսպիսի խայտառակ և պարսաւելի դատարարական տրամաբանական հետեւանքն է մղել զժողովուրդն յանաստուածութիւն և յուսահատութիւն:

Հին ժողովուրդք կը նկատէին զԱստուած իբրեւ միահեծան տէր որ ըստ իւր քմահաճոյից կը շնորհէր երանութիւն կամ թշուառութիւն: Զարդիս կրօնական գաղափարք կը համաձայնին արդի գիտութեան ըստ որում Աստուած անփոփոխ և անաչառ հայր մի է, նա ի սկզբան հաստատած է բնական օրէնքներ ըստ որոց աշխարհ կ'ընթանայ և ըստ որոց ամեն անհատ և ամեն ազգ կը յօրինէ զիւր ներկարագիր և վախճան: Նա կարգած է պայմաններ փրկութեան զորս չյարգելով ժողովուրդ կը մատնուի պերութեան: Աստուծոյ կերպն արդարութիւն գործելոյ օրինական է և ոչ օրինազանցական կամ հրաշական: Միանգամայն նա բնու չախորժիր մեր չարչարանօք: Բնու վճռած չէ թէ Հայ ազգն պարտի այսպէս մնալ և փճանալ: Եթէ Հայն յարգէ զԱստուածային պայմանն ազատութեան, յայնժամ կը փրկուի, եթէ ոչ կը կորնչի:

Ազգք և անհատք կ'ուղղեն զիւրեանց գործ անձնական շահուց հաշուովք, ուստի որքան ևս անկեղծ և հզօր լինի բաղձանքն Եւրոպիոյ անտեղի է ակնկալել զնոցին միջամտութիւն ընդ մարդասիրական նկատմամբք: Հայաստանի բարեփոխումն հնար է միայն մեծ զոհողութեամբք և թերեւս վտանգելով զանդորրութիւն ազգաց: Եթէ այս զոհողութեանց և վըտանգաց փոխարէն կայ մի համեմատաւոր վարձատրութիւն, Պետութիւնք կը ընտրեն բարեփոխել զՀայաստան, այսինքն վերջ տալ աշխարհաւեր իշխանութեան մահմետականաց: Եւրոպա չչարժիր ուրիշ նկատմամբք և իւր դաշինք իսկ, որք առաւել անձնասիրական հաշուոց վըրայ հիմնուած են, չեն ինչ սրբազան: Կը ցաւիմ որ տեղին ջներեր պատմութեամբ լուսաբանել զմեր ասածն: Պարտ է մեզ քաջ ըմբռնել թէ զայնս յօգնութիւն մըղելու հզօրագոյն միջոցն է ցուցնել նոցա ևս շահն ի փոփոխման վիճակին Հայոց: Հայաստանի ներկայ անշահագործեալ վիճակն և թէ ինչ կարող է անել Հայ ցեղն հզօրագոյն փառք են առաջի արդի աշխարհի քան Հայաստանի աւերակք և թըշուառութիւնք:

Արդ, եթէ բանաւոր չէ յուսալ զհըրաշաւոր միջամտութիւն Աստուծոյ և ոչ իսկ Եւրոպիոյ, կայ մի սկզբունք և հիմն որոյ վրայ կրնամք ապահովապէս հաստատել զմեր յոյս: Հաստատապէս կը պատասխանեմք, այո՛: «Դուն քեզ օգնէ, և Աստուած ալ քեզ պիտի օգնէ», առածն աշխարհի փորձառութեան եզրակացութիւնն է: Մեք պարտիմք լաւ հասկնալ թէ Հայաստանի ազատութեան գործն մեզ կը պատկանի և մեր պարտքն է, ոչ այլոցն, զայն իրացնել: Մեք պարտիմք իսկոյն և իսպառ ի բաց նետել զմեր կրաւորական դիրքն, դադրել զմեր երախայական լալկան և բողբոսական ընթացքն և դադրել զմեր կոչում և զմեր ճակատագիր կախեալ անել զքմահաճոյից օտարաց: Փոխանակ պարտ է մեզ զգենուլ դարուս արական ոգին, առնել զնախաձեռնութիւն և զտիրական գործօն պատասխանատուութիւն և այսու ցոյց տալ զմեր կարողութիւն և զարժանիս: Պարտիմք այնպէս գործել իբր թէ Եւրոպա պիտի չօգնէ մեզ կամ թէ պիտի հակառակի մեզ: Սակայն եթէ գործեմք այն ուղղու-

թեամբ որպէս կը յուսամք բացատրել յաջորդ գրութեամբ, Եւրոպա պիտի չիշխէ այլ ևս անտարբեր մնալ, այլ զմեզ ևս հաշուել:

Մեք կը յայտարարեմք թէ վերակազմումն Հայաստանի և ապահովումն ապագային Հայ ազգին անյուսալի է, եթէ ոչ անհնար, առանց այդ ժողովրդեան լինելոյ մի տիրական գործիչ ի մէջ գորութեանց որք կ'ազդեն իւր կացութեան: Այո՛ է Հայկական վարդապետութիւն որ պարտ է լինիլ հիմն մեր ազգային գործունէութեան:

ՏԻԳՐԱՆ ՍԻՒՆԻ

ՆԱՄԱԿ ԲԱՂԷՇԻՆ

Բաղէշ, 25 Մարտ, 1895

Քննիչներու Մուշ Ժամանելէն ի վեր փոքր ինչ շունչ կառնումք. գէթ անմեղ բանտարկութիւնք դադրած են: Պատճառունիմք հաւատալու թէ երբ քննիչք մեկնին հալածանք ու բանտարկութիւն կը վերսկսին: Կարելի չէ որ «Եթովպացին իւր մորթն փոխէ» նոյնպէս անհնար է որ Սուլթանն իւր կառավարութիւն բարեկարգէ:

Յարաբերութեանց խզման պատճառաւ յոյժ քիչ կը լսեմք քննչաց գործունէութենէն, թէ և Մուշ տեղէս 12 ժամ միայն հեռի է:

Կ'ասուի թէ Սասունցի փախստականք կոտորածի մանրամասնութիւնք համարձակօրէն կը պատմեն քննչաց: Եւրոպացի պատուիրակք կը յուսադրեն զՀայս թէ «Լաւ օրեր մերձ են». Ամեն, եկու՛ր, օրդ քաղցր: Շերվանշեխ գիւղէն առեւանգեալ Բաղէշցի Սողոմոնի դուստրն վերջերս քննչաց ազդեցութեամբ իւր ծնողաց վերադարձուցին:

Քննչաց ներկայութիւն իսկ բաւական եղած չէ ներքին կեղեքումներն դադրեցունել: Երկու շաբաթ առաջ քրդաց ծանկոտոյմէն 10 անձ մարթենիներով զինեալ Սիւլաթ գաւառի ձեռակ, Թէղուտ, Ծղակ և Աղազ գիւղերն կ'այցելեն և բռնի կը բաշխեն քսան պաթման մաքսէ փախցուած ծխախոտ: Տան գլուխ հարիւր տըրամ ծխախոտ տալով (որ միայն 30 փարայ

կ'արժէ), փոխարէն մէկ կօտ (12 քաշ) ցորեն կ'առնեն որ տասնեւհինգ դահեկանի կը ծախուի:

Ախլաթ գաւառի գայմագամն Իպրահիմ Պէյ 200 օսմանեան լիրա կորգեց աղքատ գիւղացիներէն Հայկական խնդիրն իբր պատրուակ բռնելով: Իսկ այժմ որ Հայք քննչաց ներկայութենէն քաջալերեալ կ'ուզէին դատ բանալ նորա դէմ, նա ի Կ. Պոլիս փախաւ իւր խարդախութեան փրոֆէսոր Սուլթանի թեւոց ներքեւ ապաստանելու:

Ձեզ կը յղեմ հետեւեալ ոտանաւորն որ աստ և ի շրջակայս կ'երգուի «Անի քաղաք» ծանօթ երգին եղանակաւ:

ՍՍՍՈՒՆ

Սասուն գաւառն հին Հայաստան
Համբաւդ լսեց աշխարհ Համայն.
Երիտասարդքէ են քաջազուն
Հայոց պարծանք միայն ՍՍՍՈՒՆ:

Սասուն պարարտ հովիտներով,
Պարծի ընդ միշտ իւր քաջերով.
Որ թ'և ուտեն կլկիլ, կորեկ,
Խաղան ընդ սուր գիշեր ցերեկ:

Սասնոյ երկիրն լեռներու մէջ,
Ալ որբացան իւր ել և էջ.
Քարոտ, լեռնոտ ու խորտ ու բորտ
Սասունն բուրէ այժմ արեան հոտ:

Սասուն գաւառն անտառներով,
Պարսպապատ բարձր լեռներով.
Դիմադրեց թուրք զօրքերուն,
Հայոց մատաղ եղաւ Սասուն:

Սասնոյ երկիրն յոյժ բարեւի,
Լեռներ, ձորեր ծաղկօք են լի.
Թէև թահսին քանդեց Սասուն,
Բիւր Հայք բաղձան սև հողերուն:

Սասուն կտրել ետ հրաման,
Խալիֆատիպ անմիտ Սուլթան,
Կանայք, մանկունք և արք ինկան,
Իբր քաւարար զոհ Հայկայ Տան:

Յուրտ դիականց բարդեալ դէպքէ
Եւրոպացիք եկան ի տես.
Մարտիրոսաց կարգն է Սասուն,
Արժանացաւ Սրբոց դասուն:

Սրին Գրգօն սուրբ մարտիրոս,
Ի ձեռն զօրաց ինկաւ իբր որս.
Գերի չեղաւ անգութ տաճկին
Քաջ նահատակն Հայոց ազգին:

Քաջ Գրգօն հարսն էր Շաքէն,
Որ ձեռք քաշած իւրեան կեանքէն,
Կամաւ ձգեց զինքն լեռնէն վար,
Նահատակուիլ կրօնի համար:

Սասնոյ բնիկք բոլորն Հայ են,
Փէրիքն եղաւ նոցա Կայէն,
Սասնոյ մէկ մասն կ'ըսուի Կէլի,
Սրիւն թափեց զերդ. Աբէլի:

Սասնոյ հարսունք գերի գացին,
Մանկունք զօրաց ձեռք մնացին,
Հրոյ ճարակ եղաւ Սասուն,
Գեղեր, արաւեր, այգիք Հասուն:

Սասուն թէև անգէն անոք,
Առ Սուլթան չ'ետ երբէք բողոք,
Գետի նման հոսեալ արիւնն,
Գետնէն բողոք ետ Աստուծոյն:

Թէև ինկար ո' վեհ Սասուն,
Բայց դաս տուիր գերեալ Հայուն,
Թէ սուրն ընդ սուր, բուռն ընդ բռան,
Բախմամբ ծագի Արեւիկ Մեր Տան:

ԽՂՃՈՒԿՆ

ՆԱՄԱԿ ՎԱԿԱՐԵՇԱՊԵՏԻՆ

Էջմիածին, Ապրիլ 15, 1895

Հոս հոր եկայ և դեռ մի քանիսի հետ
միայն ծանօթացած եմ էջմիածնում:

Երէկ Ս. Յարութեան կիրակին էր:
Ճեմարանի աշակերտներն վանքից դուրս
եկան խմբովին (հարիւր քսան են թուով)
Կարապետ վարդապետի առաջնորդութեամբ: Թափօրով և

«Ի գէն, Հայեր, ի սուր և ի հրացան,

Տաճկահայաստանից կոչում է մի ձայն»
երգն երգելով գնացին կէս ժամ հեռի ե-
ղող Բացախ գետի ափի մօտ, ուր մի ժա-
մանակ մնալէ վերջ՝ եկեղեցւոյ զանգակի
հնչման ի լուր՝ դարձեալ թափօրով վե-
րադարձան վանքը «Ձայներ հնչեց» երգն
գոռալով: Բազմութիւն խուռն էր այդ
թափօրին:

Առ այժմ Հայրապետը Նոր Նախիջե-
ւան կը գտնուի, հազիւ թէ Մայիս ամ-
սոյ 20ին այս տեղ կը լինի, որ ժամանակ
Ճեմարանի ուսուցիչներից մի քանիսը վար-
դապետ պիտի ձեռնադրէ:

Երէկ, ինչպէս սովորութիւն է ասն
տեղ, Հոս ալ այցելութիւններ կը տրուէ-
ին Ս. Յարութեան տօնին առթիւ խնդակ-

ցելու: Ես ալ մասնակցեցայ: Հանդիպեցայ մի քանի եկեղեցականաց որք խմբուած կը կարգային «Նոր-Դարի» 55 և 56 համարներն մի յօդուածը, ռուսական Նով. Վրէմիէն թարգմանուած, որ դեռ չարունակելի էր, «Քիւրտիստան» թէ Հայաստան» խորագրով: Յօդուածագիրն կը պաշտպանէ թուրք կառավարութիւնն՝ առնելով թէ Հայաստան գոյութիւն չունի թուրքիոյ մէջ, այլ Քիւրտիստան է: Եկեղեցականներն որք այդ յօդուած կը կարգային, սաստիկ յուզուած կը հարցնէին թէ արդեօք հերքողներ պիտի գտնուէին: Ես դարձեալ տխրութեամբ մտածեցի թէ ինչո՞ւ չունիմք յեւրոպա կեդրոն մը որ պիտի դուք կը խնդրէք այսքան տարիներէ ի վեր, կեդրոն մը որու ուշադրութենէն չկրնան վրիպիլ գանազան երկրներում հրատարակուող գոյնզգոյն յօդուածներն մեր դատի մասին, և ամենուն արժան եղած ազգու պատասխանները տան ժամանակին: Այս գործը մէկ կամ երկու մարդով չի կատարուիր. պէտք է մի զօրաւոր կեդրոնական մարմին լինի, որ ճշմարիտ պայքար մղէ և փաստերն, պատասխաններն, հերքումներն, շնորհակալութիւններն կրակի պէս տեղայ անդադար: Ո՛ր, երանի թէ չուտով ի գործ զըրուէր այդ կենսական խորհուրդ, այն առան թէ՛ գրչի և թէ՛ սրոյ մրցութիւնն պիտի կրնայ ըստ արժանւոյն կատարուիլ ի յաղթանակ Հայ սուրբ դասին:

ՍԱՆԻՐ ԶԱՆԱՊԱՐ ՀՈՐԴ

«Նայնթինթ-Սենչուրի» Մոյիսի թերթին մէջ «Թուրքիոյ իրական Վարիչքն» խորագրով յօդուած մի կայ, յորում հեղինակն կը ցուցնէ թէ երկրին յառի վարչութիւնն միայն Հայաստանի մէջ չէ, այլ ընդհանուր, և եթէ բարեկարգութեան անմիջական ազդու միջոցներ ձեռք չառնու Սուլթանն, ընդհանուր յեղափոխութիւն տեղի պիտի ունենայ և փտած կայսրութիւնն պիտի քայքայի: Զարմանք է որ յօդուածագիրն կ'երեւակայէ թէ Համիտ կարող է անել ինչ որ ճշմարտապէս մեծ վեհապետ մի միայն կրնայ:

Ոմանք սուր թշուառութեամբ կը յղեն մեզ նամակի ծայով, որ երբեմն կը կորուր: Պէտք է կամ Բէճիւթըր անել նամակն կամ մընի օրտըր յղել առ ի ապահովութիւն:

ՆԱՄՆԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Մեծ. Խմբագրապետ,

Ձեր ՀԱՅԲ Հանդիսի 1895 Փետր. 15 թուոյն 35 երեսին մէջ Սուլթանի առ Սրբազան Քաջանայապետն լէոն ԺԳ դիմումըն յիշելով այնպէս կարծէք որ Ազարեան պատրիարք իրոյն թէ ի Քնսա Ազգին Սրբազան Քաջանայապետի միջամտութիւնը խնդրած ըլլայ. այդ ամենեւին սխալ և հակառակ ճշմարտութեան է: Ազարեան Պատրիարքի մի քանի անձնական յաջողկոտ թշնամեաց հնարումն է այդ: Ազարեան Պատրիարք Սրբազան Քաջանայապետի խնդրանք ընտիր և Ազգին մեծապէս նըպաստաւոր և գործադրական Տեղեկագիր մ'ուղղած է Նորին Օծութեան և այս տեղեկագրոյն համեմատ Նորին Օծութեանը քրիստոնեայ սէրութեանց քով Հայաբնակ գաւառներու մէջ պէտք եղած բարեփոխութիւններուն մոծումն խնդրած է, և նոյն պէտքն նաև Սուլթանին հաղորդած. այս տեղեկագիրը Ձեր հրատարակած իմաստէն շատ աւելի լայն և ընդարձակ է: Հոս Գաղղիոյ և Անգղիոյ դեսպանատուներ տեղեկ են այսմ ամենայնի, որպէս նաև Ամերիկայի Միացեալ Նահանգաց ի Պոլիս դեսպանն, և դիւրին է ստուգել անտի վայն. և օր մը ամեն բան լոյս կը տեսնէ ի շինութիւն Ազգին և յամօթ և ի խոյ տառակութիւն զրպարտողաց: Նոյն երկու դեսպանատուներ կրնան նաև վկայել թէ Ազարեան պատրիարք կրկին շրջաբերական առաքած է իւր բոլոր գաւառաց մէջ գտնուող եպիսկոպոսաց և տեղապահաց՝ որոց խոսիւ կը հրամայէ սիրով և համաձայնութեամբ վարուիլ Համազգայնոց հետ նպաստել նոցա ի հարկին և եթէ դատ մը տեղի ունենայ փոխանակ դիմելու առ ատեան, գործը աւարտել իրաւախոհութեամբ. բաց աստի բոլոր մայրաքաղաք գիտէ թէ քանի քանի անմեղ Հայեր ազատած է ի բանտէ Գեր. Ազարեան Պատրիարք, որոց մէջ Տատեան Վահրամ Պէյ, Տօքթօր Թիրաքեան և այլն և այլն. և այժմ իսկ յաջողած է Աքեայի բանտարգելութենէ ազատել Տրապիզոնցի Մարիմեան Պետրոս երիտասարդը քաջածանօթ իւր բարեմասնութեամբը:

Կը խնդրուի որ հաճիք հրատարակել այս հաղորդագրութիւնը:
Պոլիս, 17 Ապրիլ, 1895

Ն. Ռ.

Կ Ե Դ Ի Ո Ն Ն Յ Մ Ա Ն Պ Է Տ Ք Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԴՈՐԾՈՂՆԵՐԷՆ

ԶԳԱՑՈՒԱԾ

(«Դրօշակէմ» արտատպեալ)

Ահա թէ ինչ է գրում «Դժոխքը» մեր ընկերներից մէկին թղթակցութիւնների հարցին վերաբերեալ:

«Մեք իբր ժողովրդի գաւակ, և ծանօթ նրա բնաւորութեան, հոգւոյ տրամադրութեան, վերջին չորս տարիների ընթացքում եղած գործունէութեան, կատարելապէս համոզուեցանք և հարկւրաւոր նպաստներով տեսանք որ կուսակցութիւններն եղան ժողովրդի հիմը քանդող, քան օգուտ տուող: Արդեօք ամօթ չէ՞ր հայ յեղափոխական գործիչներուն, որ հակառակ Մշոյ և Սասնոյ վերջին չորս տարուայ նօթի՝ անդէն լինելու գոռումին գոչումին, իրենց ականջները փակեցին, թէ և վերջնականապէս Հայի վիճակն այդպէս (արիւնով) պիտի լինէր, բայց գէթ պիտի կոտորուէր՝ կոտորելով, պիտի ըսպաննուէր՝ սպաննելով, և փոխանակ յամօթ և ի նախատինն Հայութեան, Հայաստանի պարծանք եղող Սասուն մը և Տարոն մը սովէն և զէն ու ռազմամթերք չունենալէն, մի ամիս հազիւ դիմանալով կորսուելէն ու փրատակաց տակ ծածկուելէն, գէթ պիտի դիմանար մէկ քանի ամիսներ աւելի, և յեղափոխութիւնը այդ տեւողութեամբ ընդարձակ ծաւալ ստանալով բոլորովին չպիտի քանդուէր, ողջ ողջ հորերու մէջ չպիտի թաղուէին այդ բիւրաւոր անսեղ մանկունքն ու կոյս աղջկունքը: Ժողովրդի այդ անտանելի կացութիւնն աչքի առաջ ունենալովն էր, որ մեր սիրելի և որտակից Մուրատը գրեթէ արտասուալից աջօք միշտ կը գրէր ու կ'աղաչէր հայ գործիչների օգնութիւնն ու ձեռնտուութիւնն. վերջապէս այդ կուսակցութիւններն այնպիսի վէրք մի բացած են մեր սրտին՝ ցմահ անմոռանալի է մեզ: Ներկայ հանգամանքներում ինչպիսինք մենք՝ Հայերս ենք գտնուում, անխղճութիւն և մինչ անգամ դաւաճանութիւն չէ՞ արդեօք, որ դեռ այդ կուսակցութիւններն բաժան կը գործեն. այդ ըն-

թացքը անշուշտ մեզ դրսեւ կուտայ, որ եսական փառքի յետեւից ընկած, անձնական կրքերից կուրացած ջլատում են ուժերը, քան զօրացնում, մօռայած են ժողովրդի տառապանքը և իրենց փառաբանութեան համար են ծառայեցնում գործը:...

Վերջապէս ցարդ և այսուհետեւ ևս, իբր ժողովրդի գաւակ, մեք նուիրուած եմք գործին և Ազգային շահերին, ինչպէս իմ սիրելի գործակից և աշխատակից Մուրատը իւր ՍԱԼ ստորագրութեամբ յօդուածները, նոյնպէս իմ ԴԺՈՒՔ և ԳԱԶՊԻՆ ստորագրութեամբ յօդուածները մեր յօժար կամօք երկու թերթերում ևս տըպուած են ժողովրդի աղետար զիճակը և Մայր Հայաստանի մէջ եղած արտասովոր անցքերը աշխարհի առաջ մերկաստանող ընելու համար: Մեր այդ անմոռանալի ընկերը, պ. Մուրատը և ես ինքս միշտ ջանացած եմք և կը ջանամք որքան կարելի է միութիւն գոյացնելը, քանզի գործի յաջողութեանը համար անհրաժեշտ է միութիւնն: Մուրատը գլուխ տրաքեցնելու չափ կը ցանկար նպատակ միացման գործին:...

ՊԷՏՔ Է ՇՍՐՈՒՆԱԿԵԼ

Մ Ո Ս Մ Ի Թ Ի Ն Կ Ն Ե Ր Ն

ՎՍԵՄ. ՃԷՅՄՍ ՊՐՍՅՍ, Հայոց դատին վաղեմի ախոյեանն, այժմ Բրիտանական Դաշնին անդամ, հետեւեալ տողերն գրած է վերջերս առ Տիար Սթոյն, ամերիկացի ծանօթ Հայասէրն—

«Ձեր ժողովուրդ միշտ պատրաստ են պատասխանել տառապող մարդկութեան աղաղակին, և ոչ մի դէպք վերջին ամաց աւելի արժանացած են նոցա համակրանաց քան աղէտքն հիւսուրց և երբեմն հռչակաւոր Հայ Ազգին, աղէտք որք վերջերս յանգեցան ի կոտորածն Սասնոյ: Ամերիկեան զգացման կորովի արտայայտութիւնն պիտի զօրացունէ զձեռս այնոցիկ որք յեւրոպա կը փափաքին բարենորոգման միջոցներ մուծեալ տեսնել (ի Հայաստան) որով իրօք կարելի լինի նմանօրինակ արհաւիրաց կրկնութիւնն խափանել:»

Ճիշդ այս միջոցիս պէտք է որ Ամերիկայի Հայերն աշխատին ամեն տեղ, յե-

կեղեցիս, ժողովներ անել տալ Հայկական
Խնդրոյն վերայ և հանրային կարծեաց ճն-
շումն հզօրապէս զգացունել Միացեալ Նա-
հանգաց և Եւրոպիոյ կառավարութեանց:

Օրիորդ Պէթրոսի «Կնոջ Սիւնակում»
հրաւէր կարգացած է առ ամենայն եկե-
ղեցիս անել այսպիսի ժողովներ և որո-
շումներ քուէարկել: Թող Հայք ևս ամե-
նայն ուժով ջան ի գործ դնեն առ այս:

Նիւ Եորքի մէջ Պատ. Տոքթ. Սէմֆլի
եկեղեցւոյն Մայիս 8ի երեկոյեան պաշտա-
մունքն Հայկական Խնդրոյն նուիրուեցաւ:
ՀԱՅՔի խմբագիրն ատենախօսեց և որո-
շումն ժողովրդին կողմանէ միաձայնու-
թեամբ քուէարկուելով՝ օրինակ մի յըղ-
ուեցաւ ի Ուօշինկթըն առ

Hon. Walter Q. Gresham,
State Department, Washington, D. C.

Օրինակ մի առ

British Foreign Office,
Downing Street, London, England,

Օրինակ մի առ

DAILY NEWS, London, England,

Ահաւաստիկ որոշման թարգմանութիւնն:
Մեք, անդամք Ուէսթմինսթըր փրէզ-
պիթէրիերն Չըրչի, և բարեկամք, ժողո-
վեալ ի մաս-միթինկ այս ութերորդ օրս
Մայիս ամսոյ 1895 կը քուէարկեմք հետե-
ւեալ որոշումն.

Որովհետեւ թուրք կառավարութիւնն,
գրեթէ իւր գաղնագրական յանձնառու-
թեանց, ոչ միայն զանց է արած իւր Հայ-
կական գաւառաց մէջ և է բարեկարգու-
թիւն մուծանել, այլ և, իւր զօրաց ձե-
ռօք, աւերած է բազմաթիւ գիւղեր և
ջարդած է ողջոյն հասարակութիւններ,
այր, կին և մանուկ անխտիր:

Որոշեալ լիցի

Թէ կոչում կ'անեմք մեր կառավա-
րութեան և Եւրոպիոյ քրիստոնեայ կառա-
վարութեանց և մասնաւորապէս Մեծին
Բրիտանիոյ, որ ի գործ դնեն բարոյական
և՛ եթէ հարկ է՝ այլ ամենաազգեցիկ մի-
ջոցներ յապահովել Հայաստանի համար
վարչութեան լաւ գրութիւն մի ընդ եւ-
րոպական թեւարկութեամբ:

Երկայէն հեռագրած են թէ քրիստո-
նէից կոտորած մ'ալ հոն պիտի լինէր,
բայց գլխաւոր գաւառանին ձերբակալ-
մամբն խափանուեցաւ:

Ա Յ Տ Ն Ե Ա Ն

ԱՐՈՒԵՍՏԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Վիէննա, 3 Ապրիլ 1895

Մեծ. Խմբագրապետ ՀԱՅՔի,

Ինչպէս ներդիակեալ ծանուցումէն կը
տեսնէք, Գեր. Այտնեանի Յորեւեանի հո-
մար կազմուած Յանձնաժողովն որոշած է
«Այտնեան Արուեստգիտական Հիմնար-
կութիւն» անուամբ հաստատութիւն մը
կանգնել, որուն ուղղակի ազգին արուես-
տաւոր դասակարգին և անուղղակի ազ-
գին ընդհանրութեան օգտակար ըլլալուն
համոզուած է: Գիտնալով որ Ձեր երկա-
րամեայ փորձառութիւն և ազգին պիտո-
յից ծանօթութիւնը մեծապէս պիտի նը-
պաստէ գործոյն կատարելութեան ու միւս
կողմանէ նաև յաջողութեան, կը խընդ-
րենք որ Ձեր Պատ. Թերթին մէջ յօդուա-
ծով մը Ձեր կարծիքներն յայտնէք և Ձեր
աջակցութիւնը մեզ շնորհէք:

Մնամք խորին յարգանքօք, ի կող-
մանէ Յանձնաժողովոյ «Այտնեան Արուես-
տագիտական Հիմնարկութեան»:

Հ. ԳՐԻԳՈՐԻՍ ԶՍՏԻԿ
Վ. ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆՑ ՔՕՔՕՎԻԶ

ՎԵՐԻ ՆԱՄԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Գեր. Արսէն Արքեպիսկոպոս ԱՅՏՆԱՆԻ
ուսումնական գործունէութեան 50ամեայ
յորեւեանն պիտի կատարուի այս տարի,
ուստի և առաջարկուած է որ ի յիշատակ
այդ տօնի արուեստագիտական Հիմնարկու-
թիւն մի լինի Այտնեան յորջորջմամբ:
Այս Հիմնարկութեան նպատակն պիտի լի-
նի արեւելքէն հայ պատանիներ բերել
տալ ի Վիէննա, «պարզ ձեռագործ ար-
ուեստներ սովորեցնել 3—4 տարի և վար-
պետ հանելէն ետեւ վերագործնել»:

Այտնեան, իբրեւ ներկուռ բանասէր
և քերական, գերագահ տեղ մ'ունի մեր
ժամանակակից գրողաց մէջ: Նորա ուրիշ
գործերն մեզ ծանօթ չեն, բայց «Բնական
Քերականութիւնն» հերթէ է նորա մեծ
միտքն, կորովի արամախոհութիւնն և հա-
զուագիւտ ճշդասիրութիւնն ի հանդէս բե-
րելու փառաւորապէս:

Այտնեանի յիշատակն ազգայէն հիմնարկութեամբ մի պատուելու առաջարկն յոյժ գովելի և համակրելի է, բայց վըսաւ չեմք թէ Պատ. Յանձնախումբն հիմնարկութեան տեսակի ընտրութեան մէջ չատ բարեբաղդ է: Հարեւանցի դիտողութեամբ կրնայ չատ յաջող երեւիլ այն խորհուրդն թէ եւրոպական զարգացեալ արհեստներ պէտք է սովորին հայ պատանիք և անոնց միջոցաւ վերածնի արհեստագործութիւնն յարեւս: Ինչո՞ւ միայն բժշկութեան, օրէնսգիտութեան և այլ բոժէսթոմներու հետամտին եւրոպա եկող հայ ուսանողք:

Նախ դիտել պէտք է թէ այժմ ամեն արհեստագործութիւն մեքենական դարձած է. իսկ ի մեր երկիրն մեքենայ տանել առ այժմ խնդրէ դուրս է— գի ոչ բաւական դրամագլուխ կայ, ոչ կեցածն գործածելու համար հարկաւոր ապահովութիւն կայ, ոչ փոխադրութեան զարգացեալ միջոցներ, ոչ ձեռնարկուողք: Չեմք կրնար երեւակայել թէ մեր պատանիք ինչ արհեստներ պիտի կրնան սովորիլ յաւատարմական ոստանին որ կարենան ի գործ դնել տաճկաստանի մէջ:

Դիտել կուտամք նաև այն կարեւոր իրողութիւնն թէ վերջին տարիներս պանդխտութեան դժնդակ հարկէն մղուած հազարաւոր հայ պատանիք և երիտասարդք յԱմերիկա եկած են, ուր, առանց ազգային բազմածախ հիմնարկութեան մի հովանաւորութեան պէտք ունենալու, ոչ սակաւք կը սովորին եւրոպական արհեստներ նման այն արհեստներուն որոց պիտի վարժուին Այտնեան սանունք: Ըստ մեզ երկու խնդիրներու կարեւորագոյնն այն չէ՛ այլ ևս թէ ինչ հնարքով մեր պատանիք արհեստ կրնան սովորիլ, այլ այն թէ ի՞նչ հնարքով կրնան անոնք սր սովորած են արհեստ՝ գործելու ասպարէզ գտնել հայրենեաց մէջ— ա՛յն հայրենեաց մէջ ուր նիւթական և բարոյական ամեն յառաջդիմութիւն Հայոց արգելուած է շնորհիւ չարախորժ և զեղծ կառավարութեան մի որ խանութներն փակ պահելու, արհեստաւորներն յուսահատեցնելու և ամեն ինչ աւերելու կը ջանայ:

Կան ուրիշ դիտողութիւններ ևս, զորս կը վերապահեմք մինչև որ հիմնարկութեան կանոնագրութիւնն հրատարակուի:

Ի Ձէն Ի Վրէժ

Ի զէն, ի վրէժ, գոռան Հայեր,
Արիւններկ Սասնոյ Սարեր.
Ի զէն, ի վրէժ տան արձագանք,
Մշոյ լերինք, Տարնոյ Սահանք.
Առիւծ Ձէյթուն միշտ մոլեգին,
Հոգեհաւաչ, մռնչէ ուժգին,
Ի զէն՝ մինչ ցե՞րբ լինինք գերի
Ի զէն՝ ընդդէմ վատ Թուրքերի:

Ի զէն, Հայեր, Սասուն աւեր,
Ձինու, վրիժու կարգայ հրաւէր.
Արցունքն քերց մեր և արիւն,
Մեզ բողբոքն ի փրկութիւն
Ողբան մարք մեր որդեկորոյս
Եւ դառնագոչ ձայնեն անյոյս
Բռնաւորին հարուածոց սոսկ
Ալ լա՛ւ հեծենք զերդ նահատակ:

Ի զէն, Հայեր, վան և Բասէն,
Աղի արցունք, արիւն հոսեն.
Եփրատ, Տիգրիս, Երասխ և Կուր,
Ի վրէժ մնչեն աղեկտուր,
Կնճռէ Մասիս ճակատ իւր պերճ,
Կարին, Կովկաս գոչեն անվերջ
Ի զէն, ալ լա՛ւ, ողբ վանասուն՝
Հոգեվարքի մէջ է Սասուն:

Չարթի՛ք. ի զուր հինգ երկար դար,
Բողբոքեցինք երկնից արդար.
Մերժեց Աստուած բողբոքն Հայուն,
Խուլ է եւրոպ մեր ողբերուն,
Մոռցաւ Սուլթան պարտք և օրէնք
Քարերն խօսին թէ լռենք մենք,
Կեանք և կամ մահ որն ալուզենք
Պէտք է բառնալ զինու դէմ զէնք:

Ֆիլատէլֆիա

ՆԱԿԱՐԻՍ

ՆԱՄՈՒԿ ԼԻՆԻՆ

Լին, 7 Մայիս 1895

Մենք Հայքս վայրկենական բորբոքման տակ միայն լաւ կը գործեմք: Լաւն կը ճանաչեմք բայց խնդրոյ էութիւնն չեմք ըմբռներ. զլաւն յարստեւ գործել ուսած չենք:

Երբ Սասնոյ ջարդի գոյժն մեզ հասաւ զգացինք թէ միութեան պէտք կայ, թէ ուժերն ամփոփուելու են, թէ որոշ ծրարիւ և միահամուռ պէտք է գործել Վար-

դարեւ ուրախալի էր տեսնել թէ աստանդ կուսակցութիւնք ի մի ձուլուած յառաջ կը խաղային :

Յուն վարի և փետրվարի ձիւներն ծածկեցին Սասունցւոց արիւնլուայ դիակներ և ցրտացուցին Սմերիկաբնակ Հայու ազգաորրութիւն :

Լինցիք առաջին եղան միութիւն մը կազմելու . բայց կազմակերպութիւնն չուար վերջալոյսն տեսաւ կեդրոնական և Ծրագրական Հնչակեանց միջև տեղի ունեցած վէճի մը պատճառաւ :

Բայց ես չյուսահատեցայ երբ տեսայ թէ մի քանի ազգայինք, կուսակցական ներկէ գուրկ, մի ժողով վերսկսեցին որ կը շարունակուի :

Ժողովոյն վերջին երկու նստից ներկայ եղած եմ : Ապրիլ 28ի ժողովոյն մէջ ատենախօսեց Տր. Սէրիճանեան նիւթ ունենալով «ո՞ք են մեր թշնամիք» : Պերճ լեզուաւ ներկայացուց զառաջին թշնամին «նախանձ» անուան ներքև . երկրորդն՝ «անբարոյականութիւն» . երրորդն՝ «ագիտութիւն», անուանեց . Սոյն թշնամիք իրենց իրական գոյներով պատկերացուց մի ժամ խօսելով : Յաւարտ ժողովոյն ամեն ոք գոհ կը մեկնէր :

Մայիս 5ի ժողովոյն ատենախօսեց Տի. Լեւոնեան նիւթ ունենալով «Մահացու Հարուած» : Ժողովրդին հասկանալի լեզուով բացատրեց թէ Հայն օտարի հարուածէն չմեռնիր . «կայ մի հարուած, ասաց, որ մահ կը սպառնայ Հայուն և այն մեր ներքին անմիաբանութիւնն է : Մեր հին իշխանութեանց անկում պատճառեց և մեզ ալ մահ պիտի պատճառէ եթէ չուտով դարման չտանիմք» : Իրր մի ժամ խօսեցաւ անմիաբանութեան պատճառներն և դարմաններն թուելով : Ի վերջ իւր բանից խրատեց զունկնդիրս հեռի կենալ լարգ մը մրստած ձեռագիր և ոչ ձեռագիր թղթի կտորներէ, ոյք դատին օգուտ մը չհասցունելէ զատ ժողովրդեան միտքը կը պղտորեն, անմիաբանութիւն կը սերմանեն և հայ դրականութեան անուն կաւրեն :

ՅՈՅՍ—ՍԷՐ

Հնտախան սաստկացած է նորէն ի Մէքէէ, ուր օրն 25 հոգի, միջին հաշուով, կը մեռնին այդ ախտով :

ՄԵԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԺՈՂՈՎ ՀԱՅՈՑ

ԽՆԴՐՈՅՆ ՀԱՄԱՐ

Ի ԼՈՆՏՈՆ

Մայիս 7

Թայմզ և Տէյլի նիւզ հինգական սիւնակ կը նուիրեն այս ահագին ժողովն ներկարագրելու, որ տեղի ունեցած է ընդ նախագահութեամբ Արկայլի դքսին և ապա Ուէսթմինսթր դքսին : Սրահի մէկ պատին վերայ արձանագրուած էր 61րդ յօդուածն, և միւսին վերայ սա խօսքն «ՀԱՅՔ ԻՐԵՆՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՄԷՋ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔՆ ԿԸ ՊԱՀԱՆՋԵՆ» : Հայր ՊԱՐՈՆԵԱՆ և Սասունէն էլ կաճ հայ փախստականքն իրենց ազգային տարազով՝ բեմին վերայ էին, ուր բազմած էին Եորքի Արքեպիսկոպոսն, բազմաթիւ լորտեր և լէյտիններ, 50ի մօտ անդամք խորհրդարանի և այլ նշանաւոր որեալ, երկու հազար ունկնդիրներու հետ : «Տէյլի նիւզ» կ'առէ թէ «երեւելի մարդիկ որք ժամանակակից քաղաքականութեան ու է ինդրոյ վերայ հազիւ կը համոձայնին, միտքանեցան Դրան բռնաւորութեան դէմ բողոքելու երէկ : Բիչ դատ կայ որ կարենայ այդքան նշանաւոր տարբեր կարգի որեալ ի մի վայր բերել» : Եւ կը յաւելու «խաղաղութիւնն չպիտի լինի մինչև որ այդ աւերալ գաւառաց վերայ քրիստոնեայ կառավարիչ մի կարգուի, քրիստոնեայ ոստիկանութիւն մի դրուի իւր տրամադրութեան ներքոյ և տեւական Սահմանադրութիւն մի հաստատուի» : Այս մեծ և կարեւոր ժողովոյ վերայ աւելի տեղեկութիւն պիտի տամք յաջորդ թուով :

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

ՕՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի տարին 300 թիւ : Օտար երկրաց համար տարեկան բաժանորդագրինն է 25 Քրանք կամ 5 սուլար : «ՀԱՅՐԵՆԻՔ» ԹրքաՀայոց լուսագոյն լրագիրն է : Հասցէն է —

Le Journal HAIRENIK.

Galata, Constantinople, Turquie

ԵՅԼ ԵՒ ԵՅԼՔ

Է. Ա. Պարթևթ, Խորհրդարանի անդամ, բաց նամակ մի հրատարակեց մեղադրելով զԿլատսթոն թէ առանց ապացուցի յանցաւոր կը հռչակէ դանմեղն Համիտ: Մեծ Ծերունին պատասխանեց թէ ինքն անպատասխանատու վկայութեանց հետ գործ չունի այլ վստահելի տեղեկութեանց առատագոյն աղբիւրներ ունենալով խօսած է:

Պուլկարիայէն և ուրիշ շղթայագերծ երկիրներէ վերջերս մահմետականք աւելի մեծ թուով կը գաղթեն ի Թուրքիա, և Սուլթանն, մայրաքաղաքին մերձակայքն մահմետական բնակութեամբ ամրացունելու հոգով՝ նոցա հող կուտայ:

Կ. Պոլսէն Մայիս 12ին կը հեռագրեն թէ երեք դեսպանքն, նախորդ օրն, Սուլթանին ներկայած են Հայաստանի բարեկարգութեան համար ծրագիր մի:

Թայմզին կը հեռագրեն թէ Արարիկի լուսաւորչական և բողոքական Հայոց երկու եկեղեցիներուն մէջ շան գիակի մի գլուխն ու մարմինն զատ զատ խաչի կապած լինելով նետեր են, որոյ առթիւ Հայք սոսկալի կերպով յուզուած և խռնուած են եկեղեցւոյն պարտիզին մէջ, բայց առանց արկածի անդորրութիւնն վերահաստատուելու է: Թուրք պաշտօնէից քննութիւնն իբր թէ ցուցած լինէր թէ այդ սրբապղծութիւնն հայ խռովայողներու գործն է:

«ՏՀի Արինա» ամերիկեան հանդիսին Մայիսի թուով կը հրատարակէ պատուական յօդուած մի մեր ծանօթ բարեկամ Բոպէրթ Սթայն, և իրրեւ դարման կ'առաջարկէ որ Կոմս Պէնճէմին տը Բալլէյ, Հունգարացի սքանչելի կառավարիչն Պոսնիա-Հէրսէկովինոյ, Հայաստանի ընդհանուր կառավարիչ կարգուի: Սուլթանն առայս համոզելու համար կասէ հեղինակն. — «Թող յստակ հասկցուի թէ ինչ է առաջարկութիւնն: Թուրքիոյ կամ Սուլթանին փնաս անելու դիտում չկայ: Հայաստան թրքական գաւառ մի պիտի մնայ որպէս առաջ: ... Նոր կառավարիչն աւելի իշխանութիւն պիտի չունենայ քան նախորդ-

ներն:»

Տիար Սթայնի երախտապարտ եմք իւր բարեխոհ համակրութեան համար զոր անգամ մեռ կ'ապացուցանէ այս յօդուածով, սակայն իւր առաջարկն կը թուի մեզ կէտմիջոց մի, որ բաղձացեալ արդիւնքն չի կրնար տալ Հայաստանի մէջ ինչպէս ի Պոսնիա-Հէրսէկովինա, և այն սարգ պատճառաւ որ այդ երկիրն Աւստրիոյ իշխանութեան ներքեւ է, մինչ Հայաստան պիտի մնայ թրքական գաւառ: Այդ տարբերութիւն էական է զոր մեր բարեկամն կը թուի բնաւ չնկատել: Պաշտօնէն իշխանութիւն և հրաման տունդ կառավարիչ մի, հրեշտակ լինի, չի գորեր բարեկարգել զՀայաստան:

Լորէնսէն կը գրէ մեզ Տ. Ա. Ա.

Հոս ալ մէս միթինկ եղաւ Սիթի Հօլի մէջ: Աւելի քան 200 Հայեր ներկայ էին, բայց ոչ այնքան Ամերիկացիք: Ժողովական եկեղեցւոյ երէցն Պատ. Ռեօլքոթ նախագահեց միթինկին: Տիար Պլէքսէլ և իւր խմբագիր դուստրն ևս ներկայ էին խօսեցան. ծերունին շատ եռանդով ասե-նախօսեց. նա առաց թէ «Ամերիկայի Ժողովուրդն լաւ չէ հասկացել Հայկական խնդիրն, եթէ լաւ հասկացած լինէր, ամբողջ Ժողովուրդն Կ. Պոլսոյ վերայ կը վազէր:»

Լինէն կը գրէ մեզ Տ. Ա. Լ.

Դրամով թուղթ խաղալու կորստաբեր սովորութիւնն ճարակիլ սկսած է տեղւոյն Հայոց մէջ: Տքթ. Սէրիճան Ժողովոյ մէջ ազդուապէս խօսած և զգուշացուցած է մեր ազգայինքն այդ զարհուրելի ախտէն:

Ուստըրէն կը գրեն մեզ.

Քաղաքի բողոքական Հայերն յօդուա Մասնոյ արկածելոց 209 տուար հանգանակելով յղեցին, ի ձեռն գանձապետ Տիար Նահիկեանի:

ՆՈՐ ՀՐԵՏԵՐԵԿՈՒԹԻՒՆ

Ուրախ եմք ծանուցանելու մեր Ամերիկաբնակ ազգայնոց թէ Անգլիերէնէ աշխարհաբար Հայերէն նոր և ընտիր բառարան մի ի յոյս ելած է ի Կ. Պոլիս, աշխատասի-

րութեամբ Բրոք. Վ. Յ. Յակոբեանի Աւելի
քան 55,000 ռառ կը պարունակէ 728 երեսօք :
Քառասունէ կազմեալին գինն է 12 ֆրանք,
ընտիր կազմինն՝ 13 ֆրանք : Վաճառման մի-
ակ կեդրոնատեղին է Հրատարակչին, Զա-
րեհ Թորոսեանի գրատունն, ի Կ. Պոլիս,
Պաշտ-Գարու, Թիւ 4, ուր պէտք է յը-
ղուին ամեն յանձնարարութիւնք : Ամերի-
կայէն կարելի է յանձնարարեալ նամակի
ծոցով շուկէս տոլար թղթադրամ յղել
մէկ օրինակի համար, կամ 5՝ տոլար եր-
կու օրինակից համար :

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ
մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեա
նըս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օ-
ֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն
մեզ հասցունելու հրահանգ տան իրենց
քաղաքի թղթատան : Այսպէսով մեծ
դիւրութիւն ընծայած կը լինին մեզ :

ՀԱՅԿԱԿԱՆ ԶԳՆԱԺԱՄՆ կրնայ գնուիլ
թղթակազմն 60 սէնթի, լաթակազմն մէկ
տոլարի, բուն հրատարակչէն, և կամ, ի
մեծագոյն դիւրութիւն մեր հայրենակ-
ցաց, մեր ազգային Տոբթոր Այվազեանի
դիմել, սապէս .—

Dr. A. Ayvazian
424 West 57th St., New York, N. Y.

LES NOUVELLES D'ORIENT
(Ֆռանսերէն շարաթաթերթ հակաթուրք)
կը բաղկանայ 8 երեսէ
տարեկանն է երկու տոլար
Հասցէ— 80 Rue de Bondy, Paris.

Բաւական թուով Պոլսոյ շէնքերու
Փօթոկրաֆներ ունիմ, իւրաքանչիւրն 30
սէնթի. անոնք որ կուզեն գնել կանխիկ
գնով գրել հետեւեալ հասցէին .

H. K. Samuelian
8 Grant AVE.
AUBURN N. Y.

ԳԱՌՆԻԿ ՏԷՕԲՄԷՃԵԱՆ
Յանձնակատար-գործակալ
ամեն տեսակ
Գրական և տպագրական արտադրութեանց
և ևն. ևն.
Հաստատեալ 1890 ի Ռուսոնք

BUSH & Co.
Պ Ո Ւ Շ Ե Ի Ը Ն Կ .
(Հաստատեալ ի 1849)

65 Front St., Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին
և չափաւոր գնով

CHEVOLA & BARALDI,
successor to
LANTELME'S RESTAURANT
40 Union Square
(East side)

Bet. 16th and 17th Sts., NEW YORK.
ԱՅՍ ԶԱՇԱՐԱՆ ԸՆՏԻՐ ՖՈՒՆԴԱԿԱՆ
ԶԱՇԱԿԱԻ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ

NEUMANN BROTHERS
Առաջնակարգ կազմարարք Նիւ Եորքի
5 և 7 E. 10th Փողոց
57 Էվինիւի մօտ

Հայքի տարեկանն կը կազմեն 1 տո-
լարով, անունն ալ Հայերէն գրելով : Կը
կազմեն ամեն ուրիշ լեզուաւ ամեն տե-
սակ գրքեր :



CAN I OBTAIN A PATENT? For a
prompt answer and an honest opinion, write to
MUNN & CO., who have had nearly fifty years'
experience in the patent business. Communica-
tions strictly confidential. A Handbook of In-
formation concerning Patents and how to ob-
tain them sent free. Also a catalogue of mechan-
ical and scientific books sent free.
Patents taken through Munn & Co. receive
special notice in the Scientific American, and
thus are brought widely before the public with-
out cost to the inventor. This splendid paper,
issued weekly, elegantly illustrated, has by far the
largest circulation of any scientific work in the
world. \$3 a year. Sample copies sent free.
Building Edition, monthly, \$2.50 a year. Single
copies, 25 cents. Every number contains beau-
tiful plates, in colors, and photographs of new
houses, with plans, enabling builders to show the
latest designs and secure contracts. Address
MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7th Էվինիւ և Նիւ Եորք
26th և 27th Փողոցներուն միջև
Դեղագրքեր կը շինուին խնամով

**M. S. T. NAHIGIAN,
IMPORTER AND EXPORTER.**

Also

Banker and Steamship Agent.

P. O. BOX, 478-

Worcester, Mass., U. S. A. April 30; 1895.

Սիրելի Հայրենակիցք,

Մեր գործին 14րդ տարին յաջողութեամբ թեւակոխած եմք: Մեր անցեալ տարիներու գործունէութիւնն և հանրածանօթ հաւատարմութիւնն, որով միայն յարգելի յաճախորդաց գոհունակութեանն և քաջալերութեանն իրաւամբ արժանացած եմք: Ապագայում ևս առաւել դիւրութիւններ ի ձեռն, շարունակելի լինին խոստանալու պէտք չկայ:

Ուստի շնորհակալութիւնս յայտնելով մեր յարգելի յաճախորդաց վասն անցելոյն, կը յուսամք և կ'ակնկալեմք որ մեր Հայրենակիցներ առ հասարակ, մեր անցեալն գրաւական տուած պիտի բարեհաճին մեր հետ գործ ընելվստահ լինելով թէ ամենադիւրին և ամենապահով և ամենակարճ միջոցներ ունիմք զիրենք գոհացունելու, և յաճախորդաց կարեւոր դիւրութիւններ ընծայելու համար, հեռագրով կամ փոխ-գրով դրամ ուղղակի փոխադրելու կարգադրութիւն ըրած եմք պատուաւոր վաճառականներու հետ հետեւեալ քաղաքաց մէջ.

Կ. ՊՈԼԻՍ

ԽՍՐԲԵՐԴ

ԶՄԻՌՆԻՍ, ՊԵՐՈՒԹ, ԻՍԿԵՆՏԷՐՈՒՆ, ՀԱԼԷՊ, ԱՅՆԹԱՊ, ՄԷՐՏԻՆ, ՏԻԱՐՊԷՔԻՐ, ՄԱԼԱԹԻԱ, ՍՐԱԲԿԵՐ, ԱԿՆ, ԵՐԶՆԿԱՅ, ԿԻՒՐԻՆ, ԿԱՐԻՆ, ՎԱՆ, ԲԱՂԷՇ, ՄՈՒՍՈՒԼ, ԷՍԿԻ ՇԷՀԻՐ, ԿԵՍԱՐԻԱ, ԿԻՐԱՍՕՆ, ՍԱՄՍՕՆ, ՍԵՖՍԱՍԻԱ, ԵՈԶԿԱԹ, ԷՆԿԻՒՐԻԻ, ՊԱՂՏԱՏ:

Վերոյիշեալ քաղաքներէ զատ Թուրքիոյ մէջ ուրիշ տեղեր ալ ուղղակի դրամ փոխադրելու մասին ևս թղթակցութեան մէջ եմք: Մարտիլիոյ մէջ հայ պատուաւոր վաճառական մի կը նայի մեր գործոց որպէս գիտէք: Նաև Եւրոպիոյ գլխաւոր քաղաքներ ևս դրամի փոխադրութեան դիւրութիւն ունիմք ապահով պանգայի մի հետ մասնաւոր կարգադրութեամբ:

Նաւատոմսի գործակալութիւնն կը շարունակեմք, և ամեն նաւային ընկերութեանց նաւերով աշխարհի ու է կողմն գացողի համար գոհացուցիչ գներով տոմսակ կրնամք վաճառել:

Նամակաց անմիջապէս պատասխանել մեր սովորութիւնն է:

Զերդ հաւատարմութեամբ,

Մ. Ս. Թ. ՆԱՀԻԿԻԱՆ



ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈՒՄԴՐՈՒԹԵՒՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի թուրքիոյ կամ Եւրոպիոյ սեւէ կողմ երթալ ուղղներուն: Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի թուրքիոյ կամ Ռուսիա տանելու: Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղևորին, և տոմսակին կը գնեն մէկէն, որով թէ՛ ածան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին: Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է: Ամենէն լաւ գիծը գիտցուած է Ֆրէնշ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լած ենք: Նաւերը մեծ և զեղեցիկ են և արագ կ'երթան: Լաւ կերակուր և գինի կուտան, և ածան գնով:

Նաւ մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն: Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն ածան կուտանք: Սպահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և չափ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ'է: Աստի ստակ և տոմսակ թուրքիոյ կամ Եւրոպիոյ սեւէ կողմ խրկել ուղղներ կամ տեղեկութիւն ուղղներ կրնան գիմել հետեւեալ հասցէին:

Նամակներու պատասխանները չուտով կը գրուին:

D. M. SHOOSHAN

41 Exchange St., Worcester, Mass.

«ՄԱՐԶԱՐԱՆ», դասադիրք զինուորական կրթութեան, բազում ձեւերով բայ՝ արեալ. աշխատասիրեաց Գրիգոր Գասպարեան. Տպարան Մ. Ս. Գարրիէլեանի գին 50 սէնթ կամ 2 ու կէս ֆրանք:

ՀԱՅ ԲՈՂՈՒՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊՍԴԱՅՆ, 1888, նախապէս «Արեւելք» լի մէջ հրատարակուած. գրեաց Մ. Ս. Գարրիէլեան: Գին 20 սէնթ կամ 1 ֆր.

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Մ. Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Ազգային Քաղաքականութեան վերայ հանրային ուշադրութիւնն աւելի զբաղեցունելու և կարող գրիչներն նոյն կենսական խնդրոյ վերայ շարժել տալու նպատակաւ ի լոյս ընծայուած է այս ուսումնասիրութիւն: Գինն է 50 սանթիմ կամ 10 սէնթ:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ազգային ատենախօսութեանց այս հաւաքածոյին մէջ ընթերցողք պիտի գտնեն հարստահարութեանց և Դրան հակառակ քաղաքականութեան ահաւոր նկարագիրն և միանգամայն Ամերիկայի Հայոց ազգային շարժմանց առաջնորդողի մի փորձառութեան և ձգտմանց շրջափոխութիւնն: Գին 20 սէնթ կամ մէկ ֆրանք:

ԱՐՈՒՆՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ. 21

դաս 16 պատկերօք և յաւելուածով ազգային ու օտար հատրնտիր ընթերցուածոց, երկաթորութիւն Մ. Ս. Գարրիէլեանի, 1891, գին 1 թալէն կամ 5 ֆրանք:

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» կենսագրական տեսութիւն ի Մ. Ս. Գարրիէլեանէ, հանդերձ պատմական և լաւ յաջողեալ պատկերաւն Հայրիկի: 1891, գին 10 սէնթ կամ 50 սանթիմ:

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
Մ. Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ